



Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 81-Ա
ք. Երևան

9 սեպտեմբերի 2020թ.

ԱԼՎԱՐԴ ՖՐՈՆԶԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի ֆինանսատնտեսական վարչության մասնագետի (ծածկագիր՝ 42-27.1-Մ6-1) թափուր պաշտոնը համալրելու համար մրցութային հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 7-ի եզրակացությունը և Ալվարո Խաչատրյանի դիմումը՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ .

1. Ալվարո Ֆրոնզիկի Խաչատրյանին 2020 թվականի սեպտեմբերի 10-ից նշանակել Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի ֆինանսատնտեսական վարչության մասնագետի (ծածկագիր՝ 42-27.1-Մ6-1) պաշտոնում՝ վեց ամիս փորձաշրջանով:

Ալվարո Ֆրոնզիկի Խաչատրյանի աշխատանքը համակարգելու նպատակով փորձաշրջանը համակարգող նշանակել ֆինանսատնտեսական վարչության հաշվապահ (ծածկագիր՝ 42-27.1-Մ3-1) Զուլիետա Սահակյանին:

2. Աշխատավարձը՝ համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Գ. Պ Ե տ ր ո ս յ ա ն